

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

04.10.2013թ.
Նախագահ՝

Կ.Բ. Այվազյան

ք. Իջևան

Քարտուղար՝

Ա.Ս.Հակոբյան

Ներկա էին խորհուրդի նախագահ Կ.Բ. Այվազյանը(նիստի նախագահողը), խորհրդի քարտուղար Ա. Հակոբյանը , „Գծանկար, գունանկար” ամբիոնի վարիչ Ա. Միրզոյանը, ասիստենտներ Գ.Ջավրուշյանը, Ս.Հովհաննիսյանը, դասախոս Ա. Խաչատրյանը, „Դեկորատիվ – կիրառական արվեստի” ամբիոնի վարիչ Ռ. Բուդդարյանը , ասիստենտներ Ա. Չիբուխյանը, Դ. Չիբուխյանը, Ռ. Պողոսյանը ;

Նիստին հրավիրված էր մասնաճյուղի , կրթության որակի ապահովման բաժնի մասնագետ , դասախոս Վ. Աղաբաբյանը :

ՕՐԱԿԱՐԳ

1. 2013-14 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:
/զեկ. Կ.Բ. Այվազյան/
2. Կրեդիտային համակարգի կիրառության վերանայում կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում :
/զեկ. Ա.Լ. Չիբուխյան/
3. Ընթացիկ հարցեր:
/զեկ. Կ.Բ. Այվազյան/

ԼՍԵՑԻՆ – Տեղեկատվություն օրակարգի առաջին հարցի կապակցությամբ: Զեկուցողը տեղեկացրեց, որ ըստ մասնաճյուղի տնօրենի թիվ 126 հրամանի 2013-14 ուստարվա առաջին կիսամյակի առաջին

ընթացիկ ստուգումներն ու քննություններն ըստ ժամանակացույցի հարկավոր է կազմակերպել բակալավրիատում՝ ա/թ. հոկտեմբերի 14-26-ը, մագիստրատուրայում՝ ա/թ. հոկտեմբերի 21-ից մինչև նոյեմբերի 2-ը: Նշվեց, որ ըստ „Կիրառական արվեստ” մասնագիտության ուսպլանի ընթացիկ ստուգում է նախատեսված առաջին կուրսում՝ երեք և չորրորդ կուրսում մեկ առարկայից, ընթացիկ քննություններ են նախատեսված առաջին և երկրորդ կուրսերում երեքական և չորրորդ կուրսում հինգ առարկայից: Նշվեց, որ ընթացիկի օրերն ու ժամերը ընտրելու համար հիմք են ծառայել դասատախտակները: Ընթացիկները նախատեսվել են անցկացնել դասերի ժամանակ: Զեկուցողը դասախոսներին հիշեցրեց, որ ընթացիկի արդյունքների գնահատումը անց է կացվելու հանձնաժողովով, և ըստ ֆակուլտետում գործող գնահատման կանոնակարգի հանձնաժողովում ընդգրկվում են տվյալ կուրսի երկու խմբերում պարապող դասախոսներն ու ամբիոնի վարիչը: Ընդգծվեց, որ հանձնաժողովը պետք է ուշադրություն դարձնի տվյալ առարկային ուսանողի մասնակցության և առաջադրանքին, ամբիոնի կողմից ներկայացվող պահանջներին համապատասխանության հետ կապված հարցերին: Խորհուրդի նախագահը տեղեկացրեց, որ առաջին կուրսի ուսանողների կողմից արվել է առաջարկություն : Գնահատման արդյունքները հայտելուց առաջ ,ուսանողներն առաջարկում են, յուրաքանչյուրին հաննաժողովը բացատրի իր աշխատանքներում տեղ գտած բացթողումներն ու սխալները, որպեսզի ուսանողը երկրորդ ընթացիկի ժամանակ լրացնի այդ բացը: Իհարկե դասերի ընթացքում դասախոսը յուրաքանչյուր ուսանողին մատնանշում է իր աշխատանքում տեղ գտած սխալները, և ցույց տալիս դրանք վերացնելու ճանապարհները: Սակայն կարելի է ուսանողների կողմից բարձրացված հարցը քննարկել և եթե կա անհրաժեշտություն, ընդառաջ գնալ նրանց առաջարկին: Նախագահը տեղեկացրեց նաև, որ մասնաճյուղի ՈւՄՎ –ի կողմից եղել է առաջարկ, գնահատման բոլոր պրոցեսներին մասնակից դարձնել տվյալ կուրսում անվճար կարգավիճակով սովորող և տեղփոխմանը հավակնող ուսանողներին: Այդ ուսանողները կարող են գնահատման պրոցեսին մասնակցել սկզբից մինչև վերջ, հավաստիանալ թե քանի միավոր նշանակվեց դասախոսի կողմից, և՛ ամփոփագրում, և՛ ուսանողի ստուգման գրքույկում: Նշվեց, որ այդ մասին տեղյակ են մեր ուսանողները, նրանք առաջարկն ընդունեցին մեծ ոգևորությամբ, սակայն հետևողական չեն: Նրանց հետաքրքրում է ոչ թե իրենց, այլ մյուսների միավորները: Բողոքները ուսանողի կողմից լինում են ոչ թե իր, այլ կուրսընկերոջ գնահատականի հետ կապված:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հանձնարարել „ Գծանկար, գունանկար”-ի ամբիոնի վարիչին, որ ամբիոնի կողմից վերահսկվի „ Գծանկարչություն” և „ Գունանկարչություն” առարկաների ընթացիկները: Ընթացիկների ավարտից հետո /ա/թ. հոկտեմբերի 26/ ըստ ամբիոնի աշխատանքային պլանով

հաստատված համապատասխան նիստում քննարկել նշված առարկաների ընթացիկների արդյունքները, կատարել եզրակացություններ և այդ վերլուծությունների մասին զեկուցել խորհուրդի նիստում:

ԼՍԵՑԻՆ – Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ „Դեկորատիվ-կիրառական արվեստի “ ամբիոնի ասիստենտ Ա.Լ. Չիբուխյանի զեկուցումը: Նա նշեց, որ մասնաճյուղի որակի հանձնաժողովի կողմից ի գիտություն ԵՊՀ ԻՄ բոլոր դասախոսներին ներկայացվել է ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման նախագիծ: Նախագիծը բաղկացած է երկու թերթից, առաջին թերթը իրենից ներկայացնում է գնահատման սխեմա՝ այնպիսին ինչպիսին մենք կիրառում ենք, սակայն առաջընթացում է գնահատման այլ բաղադրիչներ: Առաջարկում են առաջին ընթացիկի 4 միավորից 3-ը հատկացնել թեստային առաջադրանքին, իսկ մեկ միավորը՝ գործնականի, սեմինարի արդյունքների գնահատմանը: Երկրորդ ընթացիկի 4-րդ միավորի նկատմամբ առաջարկում են նույնպիսի մոտեցում , մասնակցության 2 միավորը մնում է ուժի մեջ, իսկ եզրափակիչ քննության 10 միավորը առաջարկում են բաշխել հետևյալ կարգով. ուսանողի ինքնուրույն աշխատանքը գնահատել 4 միավոր, իսկ մասնագիտական գիտելիքներն ու կարողություններն՝ 6 միավոր:

Նշված փաթեթի երկրորդ թերթում առաջարկվում է գնահատման ընթացակարգերը: Մասնավորապես առաջարկում են թեստի համար 12 առաջադրանք 0.25 քայլով, ինքնուրույն աշխատանքի 4 միավորից առաջարկվում է / ռեֆերատ, էլույթ, զեկուցում, թեմատիկ մշակում, ներկայացում/ հատկացնել 1 միավոր, անհատական թեմատիկ առաջադրանքին՝ մեկ միավոր, առաջադրանքի սահմաններում թեմատիկ վերլուծությանը՝ 1 միավոր, առաջադրանքի գրագետ և մասնագիտորեն ներկայացմանը՝ 1 միավոր:

Ուսանողի գիտելիքը և կարողությունը գնահատելու քննական տոմսում առաջարկվում է ընդգրկել 3 հարց՝ յուրաքանչյուրը 2 միավոր:

Կրթության որակի ապահովման բաժինը առաջարկում է այդ նախագիծը քննարկել ամբիոններում և ակնկալում գործօգուտ կարծիքներ, նկատառումներ և առաջարկություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հանձնարարել ամբիոններին քննարկել վերոնշյալ նախագիծը : Անհրաժեշտության դեպքում համապատասխանեցնել ֆակուլտետի առանձնահատկություններին և ֆակուլտետի խորհրդին ներկայացնել քննարկման արդյունքները:

Ընթացիկ հարցերից կարևորվեցին մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցերի հետ կապված հարցերը: Նշվեց, որ ժամանակացույցը կազմելիս առաջնորդվել ենք նույն սկզբունքով ինչ՝ բակալավրիատի համար:

Տեղեկացվեց, որ մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում նախատեսված է 5 –ական ընթացիկ քննություն :